ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 364-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Թումանյան համայնքի ավագանու 2024թ.նոյեմբերի 22-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 101-Ն որոշումը,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Արթուր Մարտունի Շեկոյանի դիմումը ՝

Որոշում եմ՝

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0084-0004 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ, 55-րդ փողոց, 4 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. հոկտեմբերի 24
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 365-Ա

ՌԱԶՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 66-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 17122024-06-0061 և 2025 թվականի հոկտեմբերի 22-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 10 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-004-0050-0006 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.01729 հա մակերեսով այլ հողատեսք 5250 /հինգ հազար երկու հարյուր հիսուն / ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Ռազմիկ Գուրգենի Քոչարյանին /ծնված՝ 25.01.1976թ/:
2. Ռազմիկ Գուրգենի Քոչարյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում
4. Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. հոկտեմբերի 27
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 366-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-110-0112-0084 ԾԱԾԿԱԳՐԻ 0.54212 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետերի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 65-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացողհողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 8 արձանագրությունը, ըստ որի 2025 թվականի հոկտեմբերի 22-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Քարինջ գյուղում գտնվող 06-110-0112-0084 կադաստրային ծածկագրի 0.54212 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Տիգրան Վլադիմիրի Հարությունյանը՝ Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Քարինջ գյուղի կադաստրային քարտեզի 06-110-0112-0084 կադաստրային ծածկագրի 0.54212 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը,որն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, օտարել Տիգրան Վլադիմիրի Հարությունյանին՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 1575000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265132218 հաշվեհամարին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. հոկտեմբերի 27
ք.Թումանյան